ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04
ՀՀՎԱ-ԲՄԾՁԲ-26/1 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

ք.Երևան **«15» դեկտեմբերի 2025թ.**
ժամը 15:00

Հանձնաժողովի նախագահ՝
ՀՀ Վարչապետի աշխատակազմի ղեկավար՝ Արայիկ Հարությունյան
Հանձնաժողովի անդամներ՝
ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ՝ Վահան Կոստանյան
ՀՀ Վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ՝ Արմենակ Խաչատրան
ՀՀ Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ՝ Գարիկ Բոշյան
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ՝ Դանիել Դանիելյան
ՀՀ արտաքին գործերի նախարարության պետական արարողակարգի ծառայության պետ՝ Գագիկ Վանոյան
ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահ՝ Լուսինե Գևորգյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ Սոնա Շիրինյան

1. Տեղեկություններ հայտերի բացման վերաբերյալ

1.1 «**ՀՀՎԱ-ԲՄԾՁԲ-26/1**» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը էլեկտրոնային armeps.am համակարգի միջոցով բացվել են սույն թվականի դեկտեմբերի 12-ին ժամը 16:00-ին:

1.2 Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները /անունները/ և էլեկտրոնային փոստի հասցեները.

N	Մասնակիցների անվանումները	Էլեկտրոնային փոստի հասցե և հեռախոս	ՀՎՀՀ
1	«Բեգրաունդ Փրոդաքշն» ՍՊԸ	հասցե՝ ք.Երևան,Գևորգ Էմինի փ.8,բն.35 Էլ.հասցե՝ info@background.am հեռախոս +374 60 50 60 70; +374 55 60 50 70	02676654
2	«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ	հասցե՝ ք.Երևան, Բաղրամյան պողոտա 21/3 Էլ.հասցե՝ info@factory.am հեռախոս +374 10 30 90 30	00167818
3	«Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ՍՊԸ	հասցե՝ ք.Երևան, Նալբանդյան 7/1 Էլ.հասցե info@dominoproduction.am հեռախոս +374 95 95 96 96	02249552
4	«Մենք Փրոդաքշն» ՍՊԸ և «ՄԵՆՔ» պետական և ազգային արժեքների հանրահռչակման հիմնադրամ ՀԳ	հասցե՝ ք.Երևան, Արգիշտի փ., 7/4, բն.35 Էլ.հասցե info@menq.org, menqproduction@gmail.com հեռախոս 055 09 90 13	02634794/ 02646398
5	«ԳԵՎՈՐԳ ԱՂԱԲԱԼՅԱՆ» ԱՁ	հասցե՝ ք.Երևան, Ե.Քոչարի 23շ, բն.77 Էլ.հասցե vip-consalt@mail.ru Հեռախոս 091 45 12 23	30946476
6	«Էնի Վիշ» ՍՊԸ	հասցե՝ ք.Երևան, փ.Տպագրիչներ շ.15, բն.13 Էլ.հասցե alina.awtour@gmail.com հեռախոս +374 95 70 70 17	02625794

Ընդունվել է որոշում՝ կողմ - 7, դեմ - 0

2. Տեղեկատվություն հրավերի շրջանակներում ներկայացված հարցումների և պատասխանների վերաբերյալ

2.1 Հրավերի շրջանակներում հարցումներ ստացվել են և պարզաբանումները ներկայացվել են սահմանված կարգով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 7, դեմ - 0

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտի և հայտում պահանջվող փաստաթղթերի համապատասխանության վերաբերյալ

3.1 ՀՀՎԱ-ԲՄԾՁԲ-26/1 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում մասնակիցների կողմից ներկայացված հայտերը ընդունվել են էլեկտրոնային համակարգի կողմից և բացվել են սահմանված կարգով:

3.2 «Բեգրաունդ Փրոդաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին;

3.3 «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես

- Ներկայացված հայտում Հավելված 1-ը, Հավելված 1.1-ը, Հավելված 1.2-ը, Հավելված 1.3-ը և Հավելված 1.4-ը հաստատված չեն էլեկտրոնային ստորագրությամբ,
- Հայտում բացակայում է շնորհանդեսը /հնարավոր է ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով/:

3.4 «Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես

- Հայտարարություն «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին համապատասխանության մասին Հավելված 1.1-ի փաստաթղթերը թերի են ներկայացված՝ որոշ պայմանագրերում բացակայում են արձանագրությունները և հաշիվ վավերագրերը,
- Հավելված 1.2-ին կից փաստաթղթերում բացակայում է «Աննա Աղաբալյան» մասնագետի գրավոր համաձայնությունը,
- Հայտում բացակայում է շնորհանդեսը /հնարավոր է ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով/:

3.5 «Մենք Փրոդաքշն» ՍՊԸ և «ՄԵՆՔ» պետական և ազգային արժեքների հանրահռչակման հիմնադրամ ՀԳ-ի /կոնսորցիում/ կողմից ներկայացված հայտում առկա փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես

- Համատեղ գործունեության պայմանագրի 4.1 կետում անհրաժեշտ է շտկել գնման առարկայի անվանումը
- Հայտարարություն «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին համապատասխանության մասին Հավելված 1.1-ում անհրաժեշտ է նշել երկու գործընկերների անունները
- Հայտարարություն «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին համապատասխանության մասին Հավելված 1.1-ի փաստաթղթերը թերի են ներկայացված՝ որոշ պայմանագրերում բացակայում են արձանագրությունները և հաշիվ վավերագրերը,
- Հավելված 1.2-ում բացակայում է ծրագրի ղեկավարի անունը
- Հավելված 1.2-ի կից փաստաթղթերում բացակայում են աշխատակիցների ինքնակենսագրականները /CV/.

- Հայտում բացակայում է շնորհանդեսը /հնարավոր է ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով/:

3.6 «Գևորգ Աղաբալյան» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտում առկա փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես

- Հավելված 1.2-ի կից փաստաթղթերում բացակայում է «Էդգար Դավթյան» մասնագետի գրավոր համաձայնությունը, ինչպես նաև համաձայնության մեջ անհրաժեշտ է նշել ծածկագրի անվանումը և համաձայնության ստացման ամսաթիվը;
- Հայտում բացակայում է շնորհանդեսը /հնարավոր է ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով/:

3.7 «Էնի Վիշ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես

- Դիմում հայտարարության մեջ մասնակցի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը թերի է ներկայացված
- Հայտարարություն «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին համապատասխանության մասին Հավելված 1.1-ի փաստաթղթերը ներկայացված են թերի, պետք է ներկայացվի հրավերով սահմանված նմանատիպ առնվազն 3 պայմանագիր, կցելով նաև հարկային հաշիվ, հանձնման ընդունման արձանագրություն և ակտ կամ տվյալ պայմանագրերի կատարումն ընդունած կողմերի գրավոր հավաստումները,
- Հավելված 1.2-ը լրացված է թերի, անհրաժեշտ է հստակ ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, ինչպես նաև փաթեթում բացակայում են աշխատակազմի՝ աշխատանքներում ներգրավվելու վերաբերյալ համաձայնությունները /ստորագրված/,
- Հայտում բացակայում է շնորհանդեսը /հնարավոր է ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով/:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 7, դեմ - 0

4. Հանձնաժողովի կայացրած որոշումները

Գնահատող հանձնաժողովը որոշեց

4.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և ծանուցել «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ին, «Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ՍՊԸ-ին, «Մենք Փրոդաքշն» ՍՊԸ և «ՄԵՆՔ» պետական և ազգային արժեքների հանրահռչակման հիմնադրամ ՀԳ–ին /կոնսորցիում/, «ԳԵՎՈՐԳ ԱՂԱԲԱԼՅԱՆ» ԱՁ-ին և «Էնի Վիշ» ՍՊԸ-ին, որպեսզի մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկեն նշված անհամապատասխանությունները:

4.2 ՀՀՎԱ-ԲՄԾՁԲ-26/1 ծածկագրով ընթացակարգի շտկված փաստաթղթերի գնահատումը տեղի կունենա 2025թ. դեկտեմբերի 17-ին:

4.3 «ՀՀՎԱ-ԲՄԾՁԲ-26/1» ծածկագրով իրականացվող գնման գործընթացի շրջանակներում հայտ ներկայացրած մասնակիցներին սույն թվականի դեկտեմբերի 17-ին, հրավիրել շնորհանդեսի ներկայացման նպատակով, հիմք ընդունելով հրավերի առաջին մասի 4-րդ բաժնի վերջին պարբերությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 7, դեմ - 0:

Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի ստորագրությունը

Հանձնաժողովի նախագահ՝	Արայիկ Հարությունյան	
Անդամներ՝	Վահան Կոստանյան	
	Արմենակ Խաչատրյան	
	Գարիկ Բոշյան	
	Դանիել Դանիելյան	
	Գագիկ Վանոյան	
	Լուսինե Գևորգյան	
Քարտուղար՝	Սոնա Շիրինյան	